

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

### Ի՞նչպես Կրնայ Ազդել Թրամփի Ընտրությունը Հայաստանի Վրայ

Ամերիկայի նախկին նախագահ Տամուլտ Թրամփի իր ընտրական հերթական հալածանքներն մեկուն ընթացքին բեմեն յայտարարեց, որ ինք պատրաստ չէ պաշտպանելու ՆԱԹՕ-ի անդամ այն երկիրներուն, որոնք չեն վճարեր իրենց տուրքերը եւ ընդհակառակը պիտի քաջալերէ Ռուսաստանը, որպէսզի յարձակի անոնց վրայ:

Թրամփի այս յայտարարութիւնը դատապարտումի ալիք բարձրացուց Ատլանտեան Ովկիանոսի երկու ափերուն: Եւրոպացիք արդէն իսկ մտահոգուած էին, որ Թրամփի վերադարձով ՆԱԹՕ-ի դաշինքը կրնայ քայքայաւորուի՝ առիթ տալով Ռուսաստանին շարունակելու իր յարձակումները այլ երկիրներու վրայ: Այժմ անոնք մտավախութեան մեջ են, որ կարելի չէ վստահիլ Թրամփի Ամերիկային:

Անցեալին, եթէ ոեւէ այլ թեկնածուի կողմէ նման յայտարարութիւններ հնչէին, պիտի նշանակէր անոր քաղաքական կեանքի վախճանը: Սակայն Թրամփի համակիրները այդ ընդունեցին ծափոզոյններով ու համաձայնութեան բացականչութիւններով:

Նախ պէտք է յստակացնել, որ ՆԱԹՕ-ի անդամ որեւէ երկիր Ամերիկային «տուրք» պարտական չէ: Հարցը հոն է, որ Ուխտի անդամ երկիրները յանձնառութիւն ստանձնած են իրենց երկրի պիտուէի նուազագոյն երկու տոկոսը յատկացնել բանակին: Կան երկիրներ, որոնք չեն կատարեր այդ պարտաւորութիւնը: Թրամփի գիտնալով հանդերձ այս նրբերանգները կը շարունակէ մոլորեցնել իր կողմնակիցները՝ օգտագործելով «տուրք» բառը:

Նախկին նախագահի նման յայտարարութիւնը պէտք է մտահոգէ նաեւ Հայութեան՝ մեկնելով անոր անցեալի վարուելակերպէն ու Հայաստանի նկատմամբ ցուցաբերած անտարբերութենէն:

Սկսելու համար յիշեցնենք Թրամփի սերտ յարաբերութիւնները Թուրքիոյ նախագահ Ռաճապ Թայիպ Էրտողանի հետ: Նախագահութեան առաջին շրջանին Ամերիկայի եւ Թուրքիոյ նախագահներուն միջեւ տեղի ունեցած էր 18 հեռաձայնային խօսակցութիւն, որ ամենէն շատն էր Թրամփի եւ աշխարհի որեւէ այլ երկրի ղեկավարին հետ: Հեռաձայնային այդ խօ-

### Օլաֆ Շոլցի Միջնորդութեամբ Կայացաւ Հայաստանի Վարչապետի ու Ատրպէյճանի Նախագահի Հանդիպումը

Փետրուար 17, Գերմանիոյ վարչապետ Օլաֆ Շոլցի միջնորդութեամբ բանակցութիւններ տեղի ունեցան Հայաստանի վարչապետի ու Ատրպէյճանի նախագահի միջեւ, որոնք Գերմանիա կը գտնուին մասնակցելու համար Միւնխիի Անվտանգութեան Համաժողովին:

Եռակողմ բանակցութիւնները տեւած են մօտ 45 վայրկեան: Երեւանը հաղորդեց, որ առաջնորդները քննարկած են Հայաստան-Ատրպէյճան յարաբերութիւններու կարգաւորումը, տարածաշրջանին մէջ խաղաղութեան ու կայունութեան հաստատման քայլերը եւ համաձայնած են շարունակել աշխատանքները խաղաղութեան պայմանագրին շուրջ:

Գերմանիոյ վարչապետը հեռացած է եւ երկու երկիրներու ղեկավարները ունեցած են ուղիղ բանակցութիւններ՝ կարճ ժամանակով:

Երկկողմ բանակցութիւններու ընթացքին Հայաստանի եւ Ատրպէյճանի առաջնորդները իրենց արտաքին գործոց նախարարներուն յանձնարարած են շարունակել խաղաղութեան պայմանագրի շուրջ բանակցութիւնները: Արարատ Միրզոյեանին եւ Զեյնուն Պալամբուզիանին նաեւ յանձնարարուած է շարունակել սահմանագատման շուրջ աշխատանքը:



Գերմանիոյ, Հայաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարները Միւնխիի հանդիպումի ընթացքին

Գերմանիոյ վարչապետ Շոլց X հարթակի վրայ գրած է, որ կողմերը պայմանաւորուած են հարցերը լուծել առանց նոր բռնութիւնների:

«Գերմանիան եւ Եւրոպան պատրաստ են իրենց կարելութիւններու սահմաններուն մէջ աջակցելու Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ խաղաղ բանակցութիւններուն: Ես այդ հաստատած եմ երկու երկիրներու հետ քննարկումներու ընթացքին», - գրած է Շոլց:

Գերմանիոյ վարչապետը մինչ

եռակողմ բանակցութիւնները առանձին հանդիպումներ ունեցած է Փաշինեան եւ Ալիեւի հետ:

Հայաստանի վարչապետը տարածաշրջանային հարցերը քննարկած է նաեւ Միւնխի գտնուող ԱՄՆ պետական քարտուղար՝ Էնթոնի Պլինքեյնի հետ: «Դժբախտաբար, այս պահին Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ առկայ է լարուած

### Արցախցիներուն Վերադարձը Միայն Ռուսերուն Երաշխաւորութեամբ Նպատակայարմար Զէ. Արցախի ՄԻՊ

Լեւոնային Ղարաբաղի ժողովուրդի հաւաքական հայրենադարձութիւնը միայն ռուսական կողմին երաշխաւորութեամբ նպատակայարմար չէ, յայտարարած է Արցախի մարդու իրաւունքներու պաշտպանը:

«Միւնխոյն ժամանակ, իմ կարծիքն այնպիսին է, որ միջազգային երաշխիքներ են պէտք: Այսինքն՝ 20 թուականից յետոյ Արցախում ներդրուած ռուսական խաղաղապահ զօրակազմի միայն այդ երաշխիքը պատմութիւնը ցոյց տվեց, որ բաւարար չէ Արցախում անվտանգութիւն ապահովելու համար», «Ազատութեան» հետ զրոյցին ընդգծեց Գեղամ Ստեփանեանը:

Ռուսաստանէն վերջին օրերուն կը յայտարարեն, թէ ատրպէյճանական կողմին հետ կը քննարկեն հայ բնակչութեան՝ Ղարաբաղ վերադարձի հեռանկարները ու առանց յստակութիւններու նշում, թէ հնարաւոր վերադարձը պէտք է իրականացուի մարդոց «իրաւունքներու եւ անվտանգութեան պատշաճ ապահովմամբ»:

### Ալիեւ Երդուելէ Յետոյ Սպառնալիքներ Հնչեցուցած Է Հայաստանի Եւ Միջազգային Հանրութեան Հասցէին

Ատրպէյճանի նախագահ Իլհամ Ալիեւը պաշտօնապէս երդուեցաւ՝ շարունակելով երկրին կառավարումը հերթական ժամկէտով:

Երգմանակալութեան արարողութենէն յետոյ ան հանդէս եկած է ելոյթով, որուն մէջ, ինչպէս կարելի էր կանխատեսել, կրկին յիշած ու յիշատակած է Հայաստանը, միջազգային հանրութիւնը, սպառնալիքներ հնչեցուցած եւ «զգուշացումներ» տուած է:

Ալիեւը, մոռնալով ուժերու եւ ռազմասարքի խիստ անհաւասարութիւնը, վարձկան անաբեկիչները ու Թուրքիոյ օգնութիւնը, «աքլորանալով» յայտարարած է, թէ Ատրպէյճանի բանակը իր ուժը ցոյց տուած է ոչ թէ զօրավարժութիւններու կամ շքերթներու, այլ՝ մարտի դաշտին մէջ:

«Հայաստանը եւ անոր ռազմական աջակցութիւն ցուցաբերողները պէտք է իմանան, որ մեզ ոչինչ կրնայ կանգնեցնել», յոխորտացած է ան, ապա յայտարարած, թէ իբր Հայաստանը Ատրպէյճանին կեղծ պահանջներ կը ներկայացնէ, որ կը խանգարէ խաղաղութեան պայմանագրի կնքման:

«Եթէ մեր դէմ ուղղուած տա-

րած քայլին պահանջներուն վերջ չդնեն, եթէ Հայաստանը իր օրէնսդրութիւնը չվերադարձնէ բնականոն հուն, ապա, բնականաբար, խաղաղ պայմանագիր չ'ըլլար», սպառնացած է Պաքուի բռնապետը:

Հայաստանէն սահուն անցում կատարելով միջազգային հարթակներուն եւ Հայաստանին այս կամ այն կերպ աջակցող երկրներուն՝ Ալիեւ յայտարարած է, թէ որոշ երկիրներ «կ'ուզեն ստանձնել համաշխարհային հանրութեան գործառնութիւնը եւ կը փորձեն խօսիլ անոր անունով, իսկ երբ ըսելիք չկայ, կը յայտարարեն, որ միջազգային հանրութիւնը դրական պիտի չընկալէ այս կամ այն հարցը»:

Այս մասին խօսելու ժամանակ ան բորբոքած է, ապա՝ կարեւոր դէմքով յայտարարած. «Քանի հովանաւոր ալ ունենայ Հայաստանը, ոչ ոք մեզ կրնայ կանգնեցնել: Մենք Հայաստանի տարածքին նկատմամբ յաւակնութիւններ չունինք, բայց իրենք ալ պէտք է հրաժարին իրենց անհիմն պահանջներէն: Ընդամենը 20-30 երկիր չի կրնար խօսիլ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Բրիտանական Կապիտալի Խոշոր «Փոխառու» Հայաստանում

ՅԱԿՈՒ ԲԱՂԱԼԵԱՆ

Վրացական Bank of Georgia-ն յայտարարել է, որ 303 միլիոն տոլարով գնում է Ամերիկայի հիմնական բաժնեմասեր: Համաձայն գործարքի, պանքը պահպանելու է իր ապրանքանիշն ու ինքնուրույնությունը, գոյություն ունեցող վարչակազմը: Միաժամանակ, Եվրոպական վերականգնման եւ զարգացման պանքը պահպանելու է Ամերիկայում իր 10 տոկոս բաժնեմասը: Ամերիկայի վաճառքի գործարքը հանրային շրջանակում էական ուշադրություն էր արժանացել երկու հանգամանքի պատճառով: Նախ, յայտնի է, որ Ամերիկայի բաժնեկիրները գործարար, բարերար, ներկայումս ատրայժմանական գերութեան մեջ գտնուող Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը: Վարդանյանի հետ առնչուող Ապրելու երկիր կուսակցության ներկայացուցիչ Մեսրոպ Առաքելյանը այդ կապակցությամբ յայտարարել է, որ Վարդանյանը որեւէ կապ չունի Ամերիկայի վաճառքի հետ, նաեւ շատ վաղուց որեւէ կապ չունի

Investment Management-ը եւ այլն: Սա յուշում է, որ գործարքը գործնականում առաւել խոշոր նշանակութեան է, քան կարող է տպաւորութիւն ստեղծուել առաջին հայեացքից՝ երբ ասուում է, որ վրացական Bank of Georgian ձեռք է բերում Ամերիկայի բաժնետոմսերի մեծամասնութիւնը: Նոյնիսկ հարց է առաջանում, թէ արդեօ՞ք գործ ունենք զգալիորէն բրիտանական խոշոր կապիտալի հետ, որը Հայաստանում փաստացի «փոխառու» է, իհարկէ պայմանական իմաստով: Յայտնի է, որ Հայաստանից հեռանալու որոշման մասին է յայտարարել բրիտանական խոշորագոյն պանքերից մէկը՝ HSBC-ն, որն իր հայաստանեան մասնաճիւղը վաճառում է Արդշինյանին: Փաստացի ստացւում է, որ Հայաստանից կարող է հեռանալ միջազգային խոշորագոյն ֆինանսական մի կառույց՝ բրիտանական պանքը, բայց հայաստանեան ֆինանսա-պանքային շուկայ է փաստացի մտնում բրիտանական գրանցում ունեցող ֆինանսական խոշոր հոլտինկի մաս կազմող վրացական պանքը: Բնականաբար, յաջորդեալ առանցքային հարցերից մէկը այն է, թէ կա՞ց արդեօք դրա տակ մեծ քաղաքականութիւն: Ընդհանրապէս, մեծ փողերը երբեք չեն լինում մեծ քաղաքականութիւնից զատ: Ինչ վերաբերում է ուղիղ կապակցութեանը, ապա այստեղ անշուշտ իրողութիւնները մշտապէս լինում են բաւականին յարաբերական: Այդուհանդերձ բաւականին յատկանշական է, որ Հայաստանի ֆինանսա-պանքային համակարգին առնչուող հայ-վրացական խոշոր մասնաւոր գործարքի մասին յայտարարւում է Հայաստանի եւ Վրաստանի միջեւ ռազմավարական գործակցութեան հռչակագրի ստորագրումից յետոյ, որ Փետրուարի սկզբին տեղի ունեցաւ Նիկոլ Փաշինեանի եւ Վրաստանի՝ այն ժամանակ դեռեւզ վարչապետ Իրակլի Ղաթիսի վերջին մասնակցութեամբ: Այդ ստորագրումից մի քանի օր անց Վրաստանում տեղի ունեցավ վարչապետի փոփոխութիւն: Անշուշտ, չկայ որեւէ հանգամանք, որը մատնացոյց կարող է անել, թէ միջպանքային մասնաւոր գործարքը որեւէ կերպ կապուած է եղել միջպետական ռազմավարական գործակցութեան հռչակագրի հետ: Պարզապէս ուշագրաւ ու խորհրդանշական է ֆոնը: «ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Ամերիկայի բաժնետեր է գործարար, բարերար, ներկայումս ատրայժմանական գերութեան մեջ գտնուող Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը

պանքի կառավարման հետ, տարիներ առաջ է դուրս եկել կառավարման խորհրդից, իսկ իրեն պատկանող բաժնետոմսերի կառավարումն էլ յանձնել է այլ ընկերութեան եւ դրա միջոցով է մնում պանքի բաժնետեր: Հանրային մեծ ուշադրութեան միւս առարկան այն էր, որ վրացական պանքի առնչութեամբ կային թուրք բաժնետերերու կասկածներ: Այստեղ կասկածի «հիմքն» այն էր, որ Վրաստանում ընդհանրապէս բաւականին մեծ է թրքական եւ ատրայժմանական տնտեսական ներկայութիւնը: Սակայն, գոնէ առաջին չկան այդօրինակ կասկածներ հիմնաւորող փաստական տուեալներ: Աւելին, վրացական Bank of Georgia-ն բրիտանական գրանցում ունեցող BOGG միջազգային ֆինանսական հոլտինկի կազմում է, Լոնտոնի պորսայի մասնակից: Խումբը Միացեալ Թագաւորութիւնում գրանցուած միջազգային ֆինանսական ընկերութիւն է, որի բաժնետոմսերը ցուցակուած են Լոնտոնի ֆոնտային պորսայի հիմնական շուկայի պրեմիում հարթակում: Այն ներառուած է FTSE-250 ինդեքսի ցանկում: Խմբի բաժնետերերի ցանկում են աշխարհի խոշորագոյն ֆինանսական ընկերութիւններից JP Morgan-ը, BlackRock-ը, Vanguard Group-ը, Schroders-ը, Norges Bank

ը: Բնականաբար, յաջորդեալ առանցքային հարցերից մէկը այն է, թէ կա՞ց արդեօք դրա տակ մեծ քաղաքականութիւն: Ընդհանրապէս, մեծ փողերը երբեք չեն լինում մեծ քաղաքականութիւնից զատ: Ինչ վերաբերում է ուղիղ կապակցութեանը, ապա այստեղ անշուշտ իրողութիւնները մշտապէս լինում են բաւականին յարաբերական: Այդուհանդերձ բաւականին յատկանշական է, որ Հայաստանի ֆինանսա-պանքային համակարգին առնչուող հայ-վրացական խոշոր մասնաւոր գործարքի մասին յայտարարւում է Հայաստանի եւ Վրաստանի միջեւ ռազմավարական գործակցութեան հռչակագրի ստորագրումից յետոյ, որ Փետրուարի սկզբին տեղի ունեցաւ Նիկոլ Փաշինեանի եւ Վրաստանի՝ այն ժամանակ դեռեւզ վարչապետ Իրակլի Ղաթիսի վերջին մասնակցութեամբ: Այդ ստորագրումից մի քանի օր անց Վրաստանում տեղի ունեցավ վարչապետի փոփոխութիւն: Անշուշտ, չկայ որեւէ հանգամանք, որը մատնացոյց կարող է անել, թէ միջպանքային մասնաւոր գործարքը որեւէ կերպ կապուած է եղել միջպետական ռազմավարական գործակցութեան հռչակագրի հետ: Պարզապէս ուշագրաւ ու խորհրդանշական է ֆոնը: «ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

Պատուիր, Պատուիր Կարուել, Ես Քերզը Վաղուց Եմ Լսել

Տիտղոսային ընդդիմութիւնը գնալով աւելի հազուադէպ է յիշում, թէ ինչ առաքելութեամբ է յայտնուել խորհրդարանում, կամ, ընդհանրապէս, որն է իրենց օրակարգը: Եթէ յիշում էլ է, ապա Աժ յայտարարութիւնների ժամին, ելոյթներում ու հարցազրոյցներում, այսինքն, խօսքի մակարդակով, բայց՝ ոչ գործի: 2021-ի խորհրդարանական արտահերթ ընտրութիւններին, յիշում էք, «Հայաստան» դաշինքի առաջնորդ Ռոբերտ Քոչարեանը խոստանում էր, որ «մաշեցնելու են մինչեւ քոքը»: Մաշեցնել իշխանութիւններին, կարծես թէ, չի յաջողուել, փոխարէնը՝ իրենք մաշուեցին որպէս դաշինք:

գնալ դիմադրութեան ճանապարհով»: Խօսում է, բայց «լարելու, դիմադրութեան ճանապարհով գնալու» քայլերի փոխարէն ճամբորդում է. այս անգամ՝ կուսակցական գործերով, արտերկիր: Օրինակ, հիմա նա մեկնել է Լիբանան՝ Պէյրութում ներհայաստանեան իրադարձութիւններն է ներկայացնում: Աւելի վաղ նա Իրանում էր: Մինչդեռ, խորհրդարանական ընդդիմութիւնը շատ աւելի ճիշտ կը վարուէր, եթէ այս իրավիճակում ընդունէր խմբակցութիւնների համատեղ փակ նիստ անցկացնելու առաջարկը: Եւ յետոյ, եթէ վերադարձել են խորհրդարան, եթէ օգուտում են պատգամաւորական մանդատի

Թեւ ընդդիմադիրները յայտարարեցին, որ Աժ վերադարձել են իրենց «սեփական օրակարգով», այն է՝ վարչապետին անվստահութիւն յայտնել, իշխանափոխութիւն իրականացնել, բայց մինչեւ հիմա այդ ուղղութեամբ անգամ նախնական քայլ չեն սկսել

Այսօր «Հայաստան» խմբակցութիւնում ՀՅԴ-ն բացարձակ մեծամասնութիւն է, միւս մասն էլ Քոչարեանի քուտոյով խորհրդարան եկածներն են՝ որդու՝ Լեւոն Քոչարեանի գլխավորութեամբ: Դաշինքի մաս կազմած կուսակցութիւնը՝ «Վերածնունդ Հայաստանը», վաղուց ապահարգան է ներկայացրել եւ քաղաքական դաշտում չկայ:

հարաւորութիւններից՝ իրենց ողջ ծաւալով, ապա տրամաբանական կը լինի նաեւ խմբակցութիւնների համատեղ նիստի անցկացնելը: Հաշուի առնելով երկրում ստեղծուած իրավիճակը՝ իսկապէս, կարելոր է, որ քաղաքական ուժերը համատեղ լուծումներ գտնեն: «ՌԱՏԱՐ»

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ  
ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի  
ԽՄԲԱԳԻՐ  
ԳՐԻԳՈՐ ԽՆՏԱՆԵԱՆ  
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՐԷ ԱԶԱՊԱՐԵԱՆ  
MASSIS Weekly  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August  
ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
MASSIS WEEKLY

Հրատարակելով հայաստանեան մամուլին մեջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր տեսակետները

ԼՈՒՐԵՐ

Երեւանի Սեջ Ռուսերը Կը Սգան Նաւալնիի Մահը



Ռուսաստանի դեսպանատան մօտ ռուսեր կը սգան ընդդիմադիր քաղաքական գործիչ Ալեքսեյ Նաւալնիի մահը

Երեւանի մէջ՝ Ռուսաստանի դեսպանատունէն քանի մը մեթր հեռավորութեան վրայ, հիմնականին մէջ ռուսեր կը սգային Քրեմլինի ամենակոշտ քննադատներէն մէկուն՝ ընդդիմադիր քաղաքական գործիչ Ալեքսեյ Նաւալնիի մահը: Ծաղիկներ, պաստառներ, մոմավառութիւն, յարգանքի տուրք կը մատուցէին 47-ամյա քաղաքական գործիչի յիշատակին, որ կեանքին վերջին տարիները անցուց բանտարկութեան մէջ՝ ամենախիստ ուժեղ գաղութին մէջ:

ալլ նաեւ սովորական ռուսեր, որ Հայաստանի մէջ յայտնուած են Ռուսաստանի՝ Ուքրանիա ներխուժումէն յետոյ: Հայաստանի մէջ հաստատուած ռուսաստանցի Նաթանիել Թրոսիքինը կասկած չունի՝ երիտասարդ ընդդիմադիր գործիչը սպանուեցաւ Ռուսաստանի իշխանութիւններուն կողմէ, եթէ ոչ մէկ անգամէն, ապա դանդաղ՝ բանտարկուած ըլլալով անմարդկային պայմաններու մէջ: Նաւալնիի մահէն յետոյ շատեր արդէն ցանկութիւն ալ չունի վերադառնալու Ռուսաստան:

Ամուսնութեան Տարիքային Շեմը Բարձրացնելու Նպատակով Կը Նախատեսուին Օրէնսդրական Փոփոխութիւններ

Հայաստանի Ազգային Ժողովի Մարդու իրաւունքներու պաշտպանութեան եւ հանրային հարցերու մշտական յանձնաժողովը Փետրուար 15-ին հրաւիրած էր խորհրդարանական լսումներ՝ «ամուսնութեան տարիքային շեմը բարձրացնելու նպատակով օրէնսդրական բարեփոխումները՝ մարդու հիմնարար իրաւունքներու պաշտպանութեան ծիրին մէջ» թեմայով: Լսումներուն մասնակցած են պատգամաւորներ, կառավարութեան անդամներ, իրաւասու գերատեսչութիւններու, կրթական հաստատութիւններու, ազգային փոքրամասնութիւններու եւ հասարակական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:

ձայնութիւնը: Անձը կրնայ ամուսնանալ նաեւ 16 տարեկանին, եթէ առկայ է անոր ծնողներուն, որոնցորդներուն կամ հոգաբարձուին համաձայնութիւնը, եւ ամուսնացող միւս անձը առնուազն 18 տարեկան է:


Bank Of Georgia-ն Ամերիաբանկը Պիտի ԳՈՒ 303,6 Միլիոն Տոլարով

Վրացական Bank of Georgia Group PLC-ն («BOGG») յայտարարութիւն տարածած է հայկական «Ամերիաբանկ»-ը (Ameriabank CJSC) գնելու մասին: Վրացական կողմը կը նշէ, որ գործարքը պիտի արժէ 303,6 միլիոն տոլար: Այդպիսով Bank of Georgia Group PLC-ն պիտի դառնայ «Ամերիաբանկ»-ի հիմնական բաժնետէր՝ ձեռքբերելով բաժնետոմսերուն 90%-ը: Մնացած 10%-ը պիտի պահպանէ վերակառուցման եւ Զարգացման եւրոպական դրամատունը:



Նախկին Նախարար Վահան Քերոբեանի Նկատմամբ Կիրառուեցաւ Տնային Կալանք

Հակափտածութեան դատարանը հրապարակեց տնտեսութեան նախկին նախարար Վահան Քերոբեանի խափանման միջոցի հարցով որոշումը: Դատարանը բաւարարեց տնտեսութեան արդէն նախկին նախարար Վահան Քերոբեանի նկատմամբ երկու ամիս ժամկետով տնային կալանք նշանակելու միջոցառումը:



Նախկին նախարար Վահան Քերոբեան

Միտամանակ՝ Քերոբեանին արգիլուեցաւ իր բնակարանին մէջ հիւրընկալել եւ շփում ունենալ այլ անձերու հետ: Արգիլուեցաւ նաեւ օգտագործել հեռախօս, ունենալ նամակագրութիւն եւ այլն: Դատարանի դահլիճին մէջ լրագրողներու հարցումներուն ի պատասխան Վահան Քերոբեան ըսաւ, որ խափանման միջոցի որոշումը պիտի բողոքարկուի: Աւելի վաղ, Քննչական կոմիտէն յայտնած էր, որ տնտեսութեան նախկին նախարարին նկատմամբ քրէական հետապնդում յարուցուած է Հայաստանի Տնտեսութեան նախարարութեան կարիքներուն համար ծառայութեան ձեռքբերման մրցույթի ընթացքին առերեւոյթ չարաչանումներու վերաբերեալ:

Բոլորին Վրայ Դիպուկահար Աշխատած Է Սասուն Միքայէլեանը՝ Ներքին Հանրային Սեջ 4 Ձողի Եւ Վիրաւորի Մասին

Ներքին Հանրային Սեջ բոլորին վրայ դիպուկահար աշխատած է, «Ազատութեան» փոխանցեց Երկրապահ կամաւորական Միութեան (ԵԿՄ) նախագահ Սասուն Միքայէլեանը: «Պատերազմի դաշտում ինչ է տեղի ունենում ... քննութիւն է գնում, հետագայում պարզ կը լինի, տեղեակ կը պահուի, միայն կ'ասեմ, որ դիպուկահար է աշխատել բոլորի վրայ», ըսաւ Միքայէլեան՝ այլ մանրամասներ չփոխանցելով: Փետրուար 13-ի առաւօտեան Սիւնիքի մարզի Ներքին Հանրային հայկական դիրքերուն ուղղութեամբ ատրպէյճանական կրակի հետեւանքով հայկական կողմը 4 զոհ, 1 վիրաւոր ունի: Զոհուած 4 անձերը եւ մէկ վիրաւորը ԵԿՄ անդամներ են: Պաքուն յայտարարեց, թէ «հատուցում» գործողութիւն իրականացուցած է՝ մեղադրելով հայկական կողմը Ներքին Հանրային ուղղութեամբ գինադադարը խախտելու եւ իրենց սահմանապահը վիրաւորելու համար: Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան, կառավարութեան նիստին ժամանակ, Ներքին Հանրային մէջ տեղի ունեցածը Ատրպէյճանի ապակառուցողական քաղաքականութեան հերթական դրսեւորում որակեց:



ԵԿՄ նախագահ Սասուն Միքայէլեան

Փանփուշտը Օգտագործած Է Իրաւապահ Մարմինը՝ Ծիշդ, Տեղին Եւ Ժամանակին. Սերժ Սարգսեանը՝ «Մարտ 1»-ի Մասին

Սերժ Սարգսեանը պնդած է, որ 2008 թուականի Մարտ 1-ին կրակած են իրաւապահները, ինչ որ ան համարած է ճիշդ, տեղին եւ ժամանակին: Այս մասին վերջինս ըսած է դատարանի բակին մէջ՝ լրագրողներու այն դիտարկման, որ Մարտ 1-ին 10 փամփուշտ կիրառուած է: «Մենք փամփուշտ չենք օգտագործել երկրի ներսում, այդ փամփուշտը օգտագործել է իրաւապահ մարմինը, եւ օգտագործել է ճիշդ, տեղին ու ժամանակին: Այդ գործում ինչ եղել է, եղել է՝ ի պատասխան այն մարդկանց, ովքեր չկարողացան այն ժամանակ իրենց նպատակին հասնել, իսկ 2018 թուին հասան», նշած է ան: Դիտարկման, որ ոստիկանու-



ՀՀ նախկին նախագահ Սերժ Սարգսեան

թիւնը նախագահին ենթակայ մարմին էր, Սարգսեանը խուսափողական պատասխան տուած է:

# ԼՈՒՐԵՐ

## Ատրպեյճանի Յետ Միջազգային Սահմանին Կայունութեան Նպաստելու Հարցին Մէջ ԵՄ Առաքելութիւնը Կարելոր Ներդրում Ունի. Միրզոյեան



Արարատ Միրզոյեանի հանդիպումը ԵՄ քաղաքացիական գործողութիւններու հրամանատար Սթեֆանո Թոմասի հետ

ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան ընդունած է ԵՄ արտաքին գործողութիւններու ծառայութեան քաղաքացիական գործողութիւններու հրամանատար Սթեֆանո Թոմասը: Զրուցակիցները քննարկած են Հայաստանի մէջ ԵՄ մշտադիտարկման քաղաքացիական առաքելութեան գործունէութեան առնչուող հարցեր՝ անդրադառնալով երկարաժամկէտ առաքելութեան տեղակայումն ի վեր մէկ տարուան ընթացքին կատարուած աշխատանքներուն: Նախարար Միրզոյեան ընդգծած է Ատրպեյճանի հետ միջազգային սահմանին կայունութեան նպաստելու հարցին մէջ առաքելութեան կարեւոր ներդրումը: Ընդգծուած է, որ առաքելու-

թիւնը ՀՀ-ԵՄ ընդլայնուող փոխգործակցութեան լաւ օրինակներէն մէկն է եւ ցոյց կու տայ անոր հետագայ խորացման հարցին մէջ թէ՛ ՀՀ, թէ՛ ԵՄ ու իր անդամ պետութիւններուն փոխադարձ անկեղծ հետաքրքրութիւնը: Այս ծիրին մէջ Արարատ Միրզոյեան եւ Սթեֆանո Թոմաս միտքեր փոխանակած են ՀՀ-ԵՄ գործընկերութեան լայն օրակարգի հարցերու շուրջ, քննարկուած են փոխադարձ հետաքրքրութիւններ կայացնող ուղղութիւններով եւ մեխանիզմներու միջոցով ընձեռուող հնարաւորութիւնները: Հանդիպման ընթացքին անդրադարձ կատարուած է նաեւ տարածաշրջանային անվտանգութեան եւ կայունութեան հարցերու:

## Թուրքիան ԵսեսԿ-ին Կոչ Ըրած Է Շտկելու Ատրպեյճանի Նկատմամբ Միակը

Թուրքիոյ Արտաքին գործերու նախարարութիւնը յայտարարութիւն տարածած է Եւրոպայի խորհրդակցական խորհրդարանական վեհաժողովին (ԵՆԽՎ) կողմէ ատրպեյճանական պատուիրակութեան լիազօրութիւնները չհաստատելու վերաբերեալ: Azertag-ի փոխանցմամբ՝ Թուրքիոյ ԱԳՆ-ն ափսոսանք յայտնած է ԵՆԽՎ-ի՝ ատրպեյճանական պատուիրակութեան մանտաթը չհաստատելու որոշման առնչութեամբ: Կը նշուի, որ այս որոշումը կը հակասէ ժողովրդավարական արժեքներուն եւ ներկայացուցչութեան իրաւունքին: Հասկնալի է, որ այս քայլը, որ կը նշանակէ համագործակցութեան եւ երկխօսութեան ուղիներու փակում, չի ծառայեր

տարածաշրջանին մէջ խաղաղութեան եւ կայունութեան ապահովման: Թուրքիան ԵՆԽՎ-ին կոչ Ըրած է հնարաւորինս արագ շտկելու այս սխալը եւ կեղծոնանալու Հարաւային Կովկասի մէջ խաղաղութեան ջանքերուն վրայ: Յիշեցնենք, որ Եւրոպայի խորհրդակցական խորհրդարանական վեհաժողովը Ատրպեյճանի պատուիրակութիւնը մէկ տարիով հեռացուցած է ԵՆԽՎ-էն: ԵՆԽՎ-ի մէջ Ատրպեյճանի պատուիրակութիւնը, իր հերթին վերաւորական դիրք ընդունելով, յայտարարած էր, որ կը դադարեցնէ համագործակցութիւնը ԵՆԽՎ-ի հետ եւ կը լքէ Սթրասպուրկի նստաշրջանը՝ ի նշան երկրին նկատմամբ պատժամիջոցի դէմ բողոքի:

## Օլաֆ Շոլցի Միջնորդութեամբ

Շարունակուած էջ 1-էն  
ծութեան նոր փուլ, վերջերս տեղի ունեցաւ լարուածութեան նոր աճ, որը պատճառ դարձաւ մեծ կորուստներ: Հայ դիրքապահներ սպանուեցին Ատրպեյճանի հետ սահմանին: Ես կը ցանկանայի այս իրավիճակը եւս քննարկել Ձեզ հետ», - ըսաւ վարչապետը: Պլինքեն X-ի վրայ գրեց, թէ վարչապետ ֆաշիստներին հետ արդիւնաւէտ գրոյց ունեցած է, քննարկելով՝ թէ ինչպէս կարող են աջակ-

ցիլ Հայաստան-Ատրպեյճան խաղաղութեան գործընթացին: «Հայաստանը շատ արժեքաւոր գործընկեր է Միացեալ Նահանգներու համար, եւ մենք կ'ողջունենք ու կը գնահատենք անոր՝ արժանապատիւ եւ ամուր խաղաղութեան հանդէպ յանձնառութիւնը: Քննարկելով եւ աշխատելով այս հարցի վրայ մենք նաեւ կ'աշխատինք ուժեղացնել մեր երկիրներու միջեւ յարաբերութիւնները տարբեր ուղղութիւններով», - գրած է Պլինքեն:

## Մեր Արտաքին Քաղաքական Սլաքին Նպատակը Պէտք Է Ըլլայ Մեր Երկրին Շահը. Նիկոլ Փաշինեան

Հայաստանի արտաքին քաղաքականութեան նպատակը պետութեան անկախութիւնը, ինքնիշխանութիւնը եւ տարածքային ամբողջականութիւնը պաշտպանելն է: Միւս կողմից չըջաններու հայ համայնքի ներկայացուցիչներուն հետ հանդիպման ընթացքին այս մասին ըսաւ վարչապետ Նիկոլ Փաշինեան՝ պատասխանելով արտաքին քաղաքականութեան սլաքի փոփոխութեան հնարաւորութեան վերաբերող հարցումին: «Մեր արտաքին քաղաքական սլաքի նպատակը պէտք է լինի մեր երկրի շահը: Հիմա մենք մեր երկրի շահերի հետեւի՞ց ենք

գնում արտաքին քաղաքականութեան մէջ, թէ՞ չէ: Եւ այդ առումով սլաքի փոփոխութեան խօսուածքը ինձ համար այդքան էլ ընդունելի չէ: Մեր արտաքին քաղաքականութեան նպատակը մեր անկախութիւնը, ինքնիշխանութիւնը եւ տարածքային ամբողջականութիւնը պաշտպանելն է: Այս առումով մեր արտաքին բոլոր կայքերի մէջ սա է մեր սլաքը», նշեց Փաշինեան: Եւրոմիութեան եւ արեւմտեան գործընկերներու հետ յարաբերութիւններուն մէջ վարչապետը կը կարեւորէ ոչ միայն նիւթական, այլեւ արժեքանական յարաբերութիւնները:

## Պաշտօնական Պաքուն Պատասխանած Է Միւնիխի Մէջ ՀՀ Վարչապետին Ըրած Յայտարարութիւններուն

Պաշտօնական Պաքուն պատասխանած է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի՝ Միւնիխի մէջ հայկական համայնքի ներկայացուցիչներուն հետ հանդիպման ընթացքին ըրած յայտարարութիւններուն եւ համարած է, որ անոնք «կը մոլորեցնեն միջազգային հանրութիւնը»: «Հայաստանի վարչապետին յայտարարութիւնները այն մասին, որ Ղարաբաղի ինքնորոշման իրաւունքը աջակցութիւն չի ստանար միջազգային հանրութեան կողմէ, եւս մէկ անգամ անուղղակիօրէն կը հաստատէ, որ հայկական կողմին յաւակնութիւնները դեռ կը շարունակուին: Այս առումով անհրաժեշտ է վերացնել Հայաստանի Սահմանադրութեան եւ օրէնսդրական արձանագրութիւններու դրոյթները, որոնք կ'արտացոլեն Ատրպեյճանի տարածքային ամբողջականութեան եւ ինքնիշխանութեան նկատմամբ պահանջներ», կ'ըսուի Ատրպեյճանի ԱԳՆ

մամուլի քարտուղար Ալհան Հաճիգասի մեկնաբանութեան մէջ: Ինչ կը վերաբերի ՀՀ վարչապետին յայտարարութեան, որ Ատրպեյճանը խախտած է ԵՆԱկողմ յայտարարութիւնը, Պաքուն կը համարէ, որ այդ «չունի հիմնաւորում»: Անոնց խօսքով՝ «Հայաստանը, հակառակ իր պարտաւորութիւններուն, դուրս չէ բերած իր գինուած ուժերը Ատրպեյճանի տարածքէն եւ չէ կատարած կապուղիներու բացման իր պարտաւորութիւնը»: «Հայկական կողմը պէտք է հասկնայ, որ տարածաշրջանին մէջ խաղաղութեան եւ կայունութեան ճանապարհը կ'անցնի հարեան երկիրներու հետ յարաբերութիւններու կառուցման միջով՝ հիմնուած տարածքային ամբողջականութեան եւ ինքնիշխանութեան ճանաչման եւ յարգման վրայ, ինչպէս նաեւ Ատրպեյճանի հետ ուղիղ կառուցողական բանակցութիւններով», ըսած է Ատրպեյճանի ԱԳՆ ներկայացուցիչը:

## Արեւմուտքը Կը Փորձէ Խանգարել Հայ-Ատրպեյճանական Կարգաւորումը.

Արեւմուտքը կը փորձէ ապակայունացնել իրավիճակը Հարաւային Կովկասի մէջ եւ խանգարել հայ-ատրպեյճանական կարգաւորումը: Այս մասին յայտարարած է Ռուսիոյ Անվտանգութեան խորհուրդի քարտուղար Նիքոլայ Փաթրուշեւը: «Մենք կը տեսնենք նաեւ արեւմտեան երկիրներուն ցանկու-

թիւնը՝ ցնցելու իրավիճակը Հարաւային Կովկասի մէջ, ինչպէս նաեւ միջամտելու հայ-ատրպեյճանական կարգաւորման, ինչ որ յանգեցուցած է իրավիճակի սրման այս շրջաններուն մէջ», ըսած է Փաթրուշեւը՝ ելոյթ ունենալով Պիշքեքի մէջ ԱՖղանստանի հարցերով անվտանգութեան խորհուրդներու քարտուղարներու հանդիպման:

## Մոսկուայի Հայ Համայնքը Պիտի Սատարէ Փութինի Վերընտրութեան

Մոսկուայի հայ համայնքը յառաջիկայ նախագահական ընտրութիւններուն պիտի սատարէ Ռուսիոյ գործող նախագահ Վլատիմիր Փութինին: Այս մասին յայտարարած է «Տիւրկ» կազմակերպութեան նախագահ Եւրի Նաւոյեանը: «Մենք՝ կազմակերպիչներ, որպէս մոսկովեան հասարակութեան հայ համայնքի ներկայացուցիչներ, կը յայտնենք մեր աջակցութիւնը նախագահի թեկնածու Վլատիմիր Փութինին», ըսած է ան՝ ելոյթ ունենալով խորհրդային առասպելական հետախօյզ Գէորգ վարդանեանի հարիւրամեակին

նուիրուած երեկոյին ժամանակ: Նաւոյեանի խօսքով՝ միջազգային յարաբերութիւններու փոփոխութեան ծիրին մէջ Փութինը այն թեկնածուն է, ով «լաւագոյնս կը համապատասխանէ ազգային շահերու եւ Ռուսաստանի ու ամբողջ աշխարհի ռազմավարական ապագային վրայ հիմնուած չափանիշներուն»: Դաշնային խորհուրդը նախագահական ընտրութիւնները նշանակած է 2024 թուականի Մարտ 17-ին: Քուէարկութիւնը պիտի տեւէ երեք օր՝ Մարտ 15-ին, 16-ին եւ 17-ին:

# Պապիկեան Խորհրդակցութիւն Ունեցած Է Զինուած Ուժերու Ղեկավարութեան Հետ



Պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեան Խորհրդակցութիւն կ'ունենայ բանակի ղեկավարութեան հետ

Պաշտպանութեան նախարար Սուրէն Պապիկեան աշխատանքային խորհրդակցութիւն ունեցած է Պաշտպանութեան նախարարութեան եւ Զինուած Ուժերու ղեկավար, ինչպէս նաեւ բանակային զօրամիաւորութիւններու հրամանատարական կազմերուն հետ:

Ըստ Հայաստանի ռազմական գերատեսչութեան՝ քննարկուած են Զինուած Ուժերուն մէջ ընթացող աշխատանքներուն առնչուող շարք մը հարցեր, Պապիկեանը համապատասխան ցուցումներ եւ յանձնարարականներ տուած է ստորաբաժանումներու ղեկավարներուն:

Սահմանին վերջին լարուածութեան լոյսին տակ, երբ ֆետրուար 13-ին ատրպէյճանական կրակոցէն Ներքին Հանդի գիրքերուն մէջ չորս զինուոր գոհուեցաւ, մէկը վիրաւորուեց, Զինուած ուժերուն մէջ լայնածաւալ անձնա-

կազմի փոփոխութիւններ տեղի ունեցան. վարչապետին առաջարկութեամբ պաշտօնէն ազատուեցաւ Վլադիմիր շտաբի պետի առաջին տեղակալ Կամօ Քոչուրցը: Անոր շտաբի պետի տեղակալի պաշտօնին փոխարինեց 46-ամեայ Արթուր Երոյեանը, որ անցած տարիներուն ղեկավարած էր Վազգէն Սարգսեանի անուան Ռազմական ակադեմիան: Արթուր Երոյեանէն բացի ԳՇ պետի եւս երկու նոր տեղակալներ նշանակուեցան՝ Կարէն Գրիգորեանը եւ Թեմուր Շահնազարեանը: Ընդհանուր առմամբ ինը նոր նշանակում եղաւ:

Օրեր առաջ ալ պաշտպանութեան նախարարի առաջին տեղակալ, ԶՈՒ ԳՇ պետ, զօրավար-լէյթենանթ Էտուարտ Ասրեանը այցելեց հարաւարեւելեան եւ հարաւարեւմտեան սահմանազօտիներ, ծանօթացաւ սահմանային իրավիճակին:

# Փաշինեան Հնարաւոր Կը Նկատէ Այս Տարի 7 Տոկոս Տնտեսական Աճը

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանի գլխաւորութեամբ կառավարութեան մէջ տեղի ունեցած է խորհրդակցութիւն, որուն ընթացքին քննարկուած է 2025-2027 թուականներու միջնաժամկէտ ծախսային ծրագրի նախնական ուղենշային մաքրոտնտեսական եւ հարկապիւտճական շրջանակը:

Մասնաւորապէս, անդրադարձ կատարուած է Հայաստանի եւ միջազգային ասպարէզի մէջ ընթացիկ տնտեսական զարգացումներուն եւ հնարաւոր կանխատեսումներուն, ըստ ոլորտներու տնտեսական աշխուժութեան, արտահանման եւ ներմուծման յարաշարժութեան, զբօսաշրջային այցելութիւններու միտումներուն, հարկապիւտճական քաղաքականութեան, ընդհանուր ծախսերու մակարդակին եւ անոր հետագայ ընդլայնման հնարաւորութիւններուն ու այլ հարցերու:

Այս ծիրին մէջ, տեղի ունեցած է միտքերու շահագրգիռ փոխանակութիւն, գերատեսչութիւններու ղեկավարները ներկայացուցած են տարբեր դիտարկումներ եւ առաջարկութիւններ:

Ամփոփելով՝ վարչապետը անդրադարձած է ընթացիկ տարուան տնտեսական զարգացման թիրախներուն եւ քայլերուն:

«Մենք նախ 2024 թուականին պէտք է ապահովենք 7 տոկոս տնտեսական աճ, ինչի՞ հաշուին՝

մեր աշխատանքի հաշուին: Ընդհանուր շինարարութեան հետ կապուած մեր ծրագրերը պէտք է փորձենք առաւելագոյն որակով իրականացնել եւ ապահովել մեծ կատարողական, մեր միջին տարեկան վիճակագրականից աւելի բարձր ցուցանիշներ ապահովել:

«Այստեղ ցանկանում եմ յատուկ ուշադրութիւն հրաւիրել մի քանի ծրագրերի վրայ. վերանորոգումի ծրագիրն անպայման պէտք է շարունակել, պէտք է խթանել սահմանամերձ գիւղերում բնակարանաշինութեան 16 միլիոն դրամի ծրագիրը, որովհետեւ այդ ծրագիրը մեզ համար հնարաւորութիւն է տնտեսական աշխուժութիւնը դէպի մարզեր աւելի շատ տեղափոխել, որովհետեւ դրա ազդեցութիւնը շատ էական է: Ես ցանկանում եմ առողջապահութեան ապահովագրութեան վրայ մեր ուշադրութիւնը հրաւիրել, որովհետեւ ինձ համար ակնյայտ է, երբ այդ որոշումը կայացրեցինք՝ առողջապահութեան ոլորտում հակադէպ ներդրումներ են լինելու, չի կարող այլ կերպ ուղղակի լինել: Եւ, ըստ էութեան, համակարգը պատրաստի վիճակում է»:

Նիկոլ Փաշինեան ընդգծած է, որ կառավարութիւնը իր աշխատանքին շնորհիւ պէտք է կարենան ապահովել 7 տոկոս տնտեսական աճի թիրախը:

# Ֆրանսայի Իրաւապահները Սառեցուցած Են Սամուէլ Կարապետեանի՝ 120 Միլիոն Եւրո Արժողութեամբ Վիլայի Սեփականութեան Իրաւունքը



Ֆրանսայի դատարանը սառեցուցած է Լազուր ափին գտնուող Իրինա Մարիա վիլայի նկատմամբ սեփականութեան իրաւունքը, որ պաշտօնապէս կը պատկանի ռուսաստանահայ գործարար Սամուէլ Կարապետեանին: Փարիզի դատախազութիւնը կը կարծէ, որ անոր իրական շահառուն ոչ այլ ոք է, քան ռուսական նախկին ղեկավար Սամուէլ Կարապետեանի զոհարար Սամուէլ Կարապետեանը: Կարապետեանը կը կարծէ, որ անոր իրական շահառուն ոչ այլ ոք է, քան ռուսական նախկին ղեկավար Սամուէլ Կարապետեանի զոհարար Սամուէլ Կարապետեանը: Ընդհանուր առմամբ ինը նոր նշանակում եղաւ:

«Le Monde»-ի տուեալներով՝ վիլան, որ տեղացիներուն յայտնի է որպէս Villa del Mare, կը գտնուի 3 հեկտար տարածքի վրայ: Վիլան, բացի քանի մը չարկ ունեցող գլխաւոր շէնքէն, կը ներառէ նաեւ երեք լողաւազան, թենիսի դաշտ եւ ուղղաթիռային հարթակ: Այս գոյքին ընդհանուր արժէքը կը գնահատուի «Ռատար»-ի

հատուկ 120 միլիոն եւրո: Վիլայի նկատմամբ սեփականութեան իրաւունքի սառեցման, ինչպէս նաեւ SNC Maritime Villa Holding ընկերութեան բաժնետոմսերու սառեցման մասին կարգադրութիւնը կը թուագրուի 2024 թուականի ֆետրուար 12-ին:

Ինչպէս կը նշէ «AFP» գործակալութիւնը, Irina Maria վիլայի նկատմամբ Փարիզի դատախազութիւնը այն ստորաբաժանումը, որ կը զբաղի կազմակերպուած յանցաւորութեան դէմ պայքարով (Junalco), հետաքննութիւն կատարած է ծանրացուցիչ հանգամանքներու մէջ փողերու լուացման փաստով, որ կատարուած է 2009 թուականի Դեկտեմբեր 11-էն՝ Փարիզի, Կիպրոսի, Ռուսաստանի եւ Ռոքպրիւն-քափ-մարթենի մէջ: Աղբիւրը՝ «Ռատար»-ի

# Ալիեւ Երդուելէ Յետոյ Սպառնալիքներ

Շարունակուած էջ 1-էն

միջազգային հանրութեան անունով: Իսկ միջազգային հանրութիւնը մեր կողքին է, եւ Ղարաբաղեան Երկրորդ պատերազմին ժամանակ՝ հակահարձակական գործողութեան ժամանակ, միջազգային հանրութիւնը մեզի աջակցեցաւ: Ատրպէյճանի միջազգային հեղինակութիւնը, կը կարծեմ, այսօր ունի մէկուն համար գաղտնիք չէ»:

Երդմնակալութեան արարողութեան ժամանակ Իլհամ Ալիեւ նաեւ «ուղերձ» ցրած է անոնց, որոնք կ'ուզեն քննարկել հայատրպէյճանական յարաբերութիւնները, ընդ որում՝ երկու երկիրներուն միջեւ միջնորդութիւնը, ըսելով որ այս հարցին մէջ միջնորդներ պէտք չեն:

«Ատրպէյճանի եւ Հայաստանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման գործընթացը պէտք չէ մնայ միջազգային օրակարգին վրայ: Ով չ'ալարի, կը սկսի խօսիլ այս մասին ու զբաղիլ այս հարցով: Գացէք եւ զբաղուեցէք ձեր գործով: Մենք մեր հարցը լուծած ենք», յայտնած է ան:

Պաքուի ղեկավարը, ինչպէս միշտ, սեփական յանցանքները

վերագրած է Հայաստանին ու նշած, թէ իբր հերթական անգամ ականատես կ'ըլլան իրենց նկատմամբ տարած քային պահանջներու. «Հայաստանը կարծես թէ մոռցած է Ղարաբաղեան երկրորդ պատերազմին արդիւնքները: Կամ գոցէ մէկը անոնց խրախուսած է, որ ընդհանրապէս չկատարեն այդ պարտաւորութիւնները»:

Շարունակելով մեծամտանալ ու պարծենալ, մոռնալով թուրքերոյ, Իսրայէլի եւ շարք մը այլ երկիրներու ակնյայտ աջակցութիւնը, խօսքի ազատութեան սահմանափակումները՝ վերջինս նաեւ ասած է, թէ 20 տարիէ աւելի կը ղեկավարէ Ատրպէյճանը, բաց ունի մէկէն ոչինչ խնդրած է:

Այս ծիրին մէջ ան յաւելած է, թէ Ատրպէյճանը երկկողմ ձեւաչափով համագործակցութեան կողմնակից է, կը վարէ բարի վերաբերմունք իւրաքանչիւրին նկատմամբ եւ չի միջամտեր այլոց գործերուն:

Այս յայտարարութեամբ Ալիեւ փորձած է լուեցնել Պաքուի՝ ակնյայտ յարձակողական քաղաքականութիւնը դատապարտող երկիրներէն հնչող յայտարարութիւնները:

ՄԱՍԻՍ  
ԱՄԵՆԱՎՍՏԱՇԵԼԻ ԱՂԲԻՐԸ ԸԱՅՐԵՆԻ ԼՈՒԲՐՈՒ

### Հայ Ամերիկեան Թանգարանի Շինութեան Երկրորդ Փուլի Համագաղութային Հաւաքը




Այս օրերուն Կլենտէյլ քաղաքի կեդրոնին մէջ, սկսած է հասակ առնել Հայ Ամերիկեան Թանգարանի եւ Մշակութային Կեդրոնի շինարարութեան գործընթացը: Արդարեւ, սոյն պատուաբեր եւ եզակի կառուցը՝ նախաձեռնութիւնն է Հաւարային Գալիֆորնիոյ Հայկական 10 գլխաւոր կազմակերպութիւններուն, որոնք այս շինութեան գաղափարը չղացած էին 9 տարի-

որուն ներկայ էին Հայ Ամերիկեան Թանգարանի Խնամակալ Մարմնի Տնօրէն Խորհուրդի անդամներ, Կլենտէյլի քաղաքապետ Տէն Պրօթմըն եւ այլ պաշտօնական հիւրեր եւ բարերարներ: Հայ Ամերիկեան Թանգարանի շինութեան երկրորդ փուլի պողպատեայ յենասիւններով կառուցման առթիւ օրուան հաղիսավար Արսինէ Թորոսեանի հրաւերով սրտի խօսքերով հանդէս



ներ առաջ, մեծ եղեռնի հարիւրամեակի օրերուն: Թանգարանի հիմնարկէքէն անցած է աւելի քան մէկ տարի եւ արդէն առաջին փուլն աւարտած (զեանայարկի կառատունը) ըլլալով այժմ սկսած է երկրորդ

եկան Արեւմտեան Թեմի առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան, Հայ Կաթողիկէ



փուլը (երկարկանի շինարարութիւն, իր բոլոր մանրամասնութիւններով): Շինարարութեան երկրորդ փուլի որպէս մեկնակէտ՝ կազմակերպուած էր բացօթեայ համագաղութային հաւաք մը Երեքշաբթի, Փետրուար 13-ին, 2024.,

### Ի՞նչպէս Կրնայ Ազդել Թրամփի Ընտրութիւնը

Շարունակուած էջ 1-էն

սակցութիւններէն մէկուն ընթացքին էր որ, Թուրքիոյ նախագահը պահանջած էր որպէսզի Ամերիկեան զօրքերը դուրս գան Սուրիոյ քրտական շրջաններէն: Թրամփ, անտեսելով Փենթակոնի ղեկավարութեան կարծիքը Ամերիկեան զօրքերը հեռացուց եւ թրքական բանակը ռազմական գործողութիւններ սկսաւ քուրտ զինեալներու դէմ, այն զինեալներուն, որոնք Ամերիկայի հետ կողք-կողքի կրուած էին «Իսլամական Պետութիւնը» պարտութեան մատնելու համար: Այդ օրերուն քաղաքական շրջանակները Թրամփի այդ քայլը վերագրեցին, Թուրքիոյ մէջ անոր ունեցած տնտեսական շահերուն: Բացի ասկէ կայ նաեւ այն պարագան, որ 44-օրեայ պատերազմի օրերուն Թրամփի վարչակարգը ոչ մէկ ջանք ըրաւ ստիպելու Ատրպէյճանի՝ դադարեցնելու համար պատերազմը, հակառակ որ, Քալիֆորնիոյ Սան Տիէյո քաղաքին մէջ իր ունեցած նախընտրական հանրահաւաքի ընթացքին, տեսնելով խուճար մը իրեն համա-

կիր հայերու ներկայութիւնը, ան բեմնէն յայտարարեց ըսելով՝ «Այդ հարցը շուտով կը լուծենք»: Այս բոլորը կը վերլուծենք գալու համար հոն, որ Սպիտակ Տուն վերադառնալու պարագային չկայ ոչ մէկ երաշխիք, որ Թրամփ դարձեալ չչարժի Թուրքիոյ նախագահի թելադրանքով, այս անգամ կանաչ լոյս տալով Ալիեիլին՝ յարձակելու համար Հայաստանի վրայ: Գաղտնիք չէ, որ ներկայիս Ալիեիլին զսպող գլխաւոր ազդակներէն մէկը Ամերիկայի զգուշացումներն են: Այս վիճակը կրնայ փոխուիլ Թրամփի ընտրութեամբ: Թուրքիոյ եւ Ատրպէյճանի համար ձեռնտու է Թրամփի ընտրութիւնը: Այսօրուայ դրութեամբ վերադարձի հաւանականութիւնը 50-50 է, որ պետք է մտահոգէ Հայաստանի Կառավարութեան, որուն առջեւ կայ շատ կարճ ժամանակ աւելի արագ զարգացնելու իր պաշտպանական միջոցները ու աւելի մօտեցնելու Եւրոպային կարողանայ ինքնուրոյն պաշտպանուիլ Ատրպէյճանի դէմ:

Գ. ԽՈՏԱՆԵԱՆ «ՄԱՍԻՍ»

առաջնորդ՝ Գերշ. Տ. Միքայէլ Եպս. Մութաֆեան, Հայ Աւետարանական Եկեղեցւոյ Տնօրէն՝ Վեր. Հենրիկ Շահնազարեան, Կիլիկիոյ Թեմէն՝ Հոգշ. Տ. Զարեհ Վրդ. Սարգիսեան եւ Լոս Անձելոսի Քաղաքապետութեան Փոլ Գիրգորեան: Բոլորն ալ իրենց ուրախութիւնն ու վառ գոհունակութիւնը յայտնեցին ի տես այս կոթողային մեծ գործին, որ պիտի դառնայ մեր ինքնութեան արտայայտիչը, ուր ապագայ սերունդներ մօտէն պիտի ծանօթանան մեր նախնիքներէն փոխանցուած մեր պատմութեան հարուստ ժառանգութեանց: Կլենտէյլի քաղաքապետ Տէն Պրօթմըն, իր ելոյթին մէջ արժեւորելով Հայ-Ամերիկեան Թանգարանի եւ Մշակութային Կեդրոնի համար եղած այս նախաձեռնութիւնը ըսաւ թէ ասիկա ոչ

միայն Կլենտէյլի այլեւ բովանդակ երկրի պարծանքը պիտի հանդիսանայ: Յարգ ունինք երկու համալիր մեծ կառուցներ (Կալեբրիան եւ Ամերիգանան), շուտով մեր քաղաքը պիտի օժտուի նաեւ երրորդ պանծալի կառուցով մը, որ մօտ ապագային այս Թանգարանն է: Սրտի խօսքով հանդէս եկաւ Հայ Ամերիկեան Թանգարանի Խնամակալ Մարմնի գործադիր նախագահ Պերճ Կարապետեան: Ան շնորհակալութիւն յայտնեց ներկայ հիւրերուն եւ յատկապէս այս ազգապարծան հոյակերտ կառուցի իրականացման սատարող բարերարներուն, ինչպէս նաեւ ազգային եւ պետական հաստատութիւններուն: Աւարտին ներկաները հրաւիրուեցան պողպատեայ յենասիւնին վրայ մակագրելու, որպէս պատմական յիշատակ:

Հովանաւորութեամբ՝  
Ս. Գ. ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Կազմակերպութեամբ՝  
Ս. Գ. Հ. Կ. ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆԻ

ՄԵԾԱՐԱՆՔԻ  
ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Տեղի կ'ունենայ՝  
Շաբաթ 24 Փետրուար, 2024 թ. 19:00-ին  
Երեկոյեան ժամը 7:30-ի

Փետրուար 24

ժողովրդային եւ հայրենասիրական երգերով կը մասնակցին՝

ԳԱՆԹ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ  
եւ  
ՀԱՐՈՒԹ ՀԱԿՈՒՅԱՆ

Փասսաթինայի Հ.Կ.Բ.Մ. Կեդրոնէն ներս  
1060 North Allen Avenue  
Pasadena, CA 91104

Մուտքի Նուէր՝ 100 Տոլար

ՏՈՍՄԵՐՈՒ ՀԱՄԱՐ ՀԵՌԱՉԱՅՆԵԼ  
Կարիւնէին 626•755•4773  
Քնարին 626•491•7899

**SOLD OUT**

# Massis Weekly

Volume 44, No. 7

Saturday, February 24, 2024

## Armenian, Azerbaijani Leaders Meet with Germany's Scholz, Pledge 'To Resolve Open Issues'



MUNICH--Armenian Prime Minister Nikol Pashinyan and Azerbaijani President Ilham Aliyev met in Munich on Saturday for talks hosted by Germany's Chancellor Olaf Scholz.

Neither leader made public statements right after the talks held on the sidelines of annual international security conference in the southern German city.

Following the Scholz meeting, Nazeli Baghdasaryan, a spokeswoman for the Armenian prime minister's office, confirmed that a three-party session involving the Armenian, Azerbaijani, and German leaders took place.

"The process of regulating Armenia-Azerbaijan relations and steps to ensure peace and stability in the region were discussed," she said. "An agreement has been made to continue the work on the peace treaty."

Scholz, who also held separate meetings with Aliyev and Pashinyan earlier in the day, tweeted that "both sides agreed to resolve open issues

without new violence." He said he reaffirmed Germany's and the European Union's readiness to make more peace efforts.

The Armenian government statement on the trilateral meeting said Aliyev and Pashinyan agreed to "continue the work on a peace treaty" between their countries. It announced no other understandings reached by them.

The Azerbaijani news agency APA reported that Scholz left the meeting room about an hour after the start of the negotiations and they continued in a bilateral format. It said Aliyev and Pashinyan instructed their foreign ministers, who were also present at the meeting, to "continue negotiations" on the peace treaty and the delimitation of the Armenian-Azerbaijani border. The Armenian side did not immediately issue a statement on the bilateral discussions.

Azerbaijan had for months re-

Continued on page 4

## Azerbaijan Ramping Up Arms Purchases, Desecrating Graves in Nagorno-Karabakh: Armenia's EU Ambassador Warns

BRUSSELS — Azerbaijan is buying drones and military equipment from abroad amid heightened tensions with Armenia, Armenia's Ambassador to the EU Tigran Balayan told Brussels Signal.

Balayan said Armenia has tracked suspected munitions purchases which have reportedly come in on military flights from countries including Israel and Turkey. These deliveries are suspected to include drones.

"60 per cent or 70 per cent of Azerbaijani military hardware comes from Israel, then Turkey," he said during an interview with Justin Stares, Head of News at Brussels Signal.

He also noted that there had been increased military flights from Serbia, which, he said, had "just announced the agreement about selling some so-



phisticated artillery equipment to Azerbaijan."

Continued on page 4

## Iran Again Emphasizes Strategic Security of the Caucasus Region



TEHRAN — Iran supports peace talks between Armenia and Azerbaijan, Iran's President Seyed Ebrahim Raisi said at a meeting with Armenian Deputy Prime Minister Mher Grigoryan.

He emphasized the willingness and readiness of his country to guarantee the strategic security of the Caucasus region and the red lines of the Islamic Republic of Iran in this regard.

Dr. Raisi also stated: "We do not agree with the presence of foreigners in the region under the pretext of solving problems, and we believe that their presence will not only not solve the problem, but will become a bigger problem for the nations and governments of the region."

Referring to the willingness of the high officials of the two countries to develop commercial and economic

relations and to upgrade them to the level of the current political relations, the President said he supports the implementation of all agreements reached between Tehran and Yerevan.

Raisi described Iran's current relationship with Armenia as "friendly" and "constructive." He called for the "full implementation" of economic agreements reached by the two neighboring states.

Mher Grigoryan, the Deputy Prime Minister of Armenia and the Chairman of the Joint Commission of Armenia and Iran, in turn, appreciated Iran's support for the independence, sovereignty and territorial integrity of Armenia and emphasized the willingness of the Armenian government to develop economic and commercial relations with the Islamic Republic of Iran, especially in the energy and mobility.

## Vigil for Missak Manouchian Before His Entry Into French Pantheon



Several dozen people gathered at Mont-Valérien, near Paris, to pay tribute to French Armenian Resistance fighter Missak Manouchian, on the eve of her entry into the Pantheon.

This vigil was attended by several members of the government, political leaders as well as families of resistance fighters.

"Immense emotion at the Vigil

for the coffin of Missak Manouchian at Mont-Valérien alongside Mrs. Hidalgo, Mayr of Paris, and Ambassador of Germany to France Stephan Steinlein. Eighty years after his execution, France pays tribute to this orphan of the Armenian genocide who became a hero of the Resistance," Armenia's

Continued on page 3

## Pashinyan Meets with British Foreign Intelligence Agency Chief



